



ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝

*Ուսուցչի հաղորդակցման ոճի ազդեցությունը
սովորողների ուսումնական գործունեության
արդյունավետության վրա*

Հետազոտող ուսուցիչ՝

Ա. Հարությունյան

*Արմավիրի մարզի Դալարիկի Հովհ. Հովհաննիսյանի անվան միջնակարգ
դպրոց*

Մենթոր ուսուցիչ՝

Ն. Վասիլյան



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

- 1.** Մանկավարժական հաղորդակցումը, նրա առանձնահատկությունները և ոճերը
 - 1.1. Մանկավարժական հաղորդակցման առանձնահատկությունները
 - 1.2 Մանկավարժական հաղորդակցման ոճերը և տիպաբանությունը
- 2.** Մանկավարժական փոխազդեցությունը, որպես աշակերտների և ուսուցչի միջև փոխազդեցության արդյունավետ միջոց
- 3.** Մանկավարժական հաղորդակցման ոճի ազդեցության ուսումնասիրման մեթոդական մոտեցումները աշակերտների ուսումնական գործունեության արդյունավետության վրա
 - 3.1 Ուսուցչի մանկավարժական հաղորդակցման ոճի որոշումը և հարաբերակցությունը աշակերտների ուսուցման արդյունքների հետ:



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին տասնամյակում մեր երկրին բնութագրական է անցումը կրթության անձնակենտրոն ուսուցմանը: Սրա հետ կապված ուսումնական արդյունքները դադարում են համարվել ուսուցման արդյունավետության միակ ցուցանիշը: Առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում սովորողների հոգեկան առողջության ապահովումը, նրանց անձնային, էմոցիոնալ և մտավոր զարգացման համար պայմանների ստեղծումը: Այս դեպքում պետք է նոր տեսանկյունից նայել ուսուցչի մասնագիտական կոմպետենտությանը և պատրաստմանը: Հաշվի առնելով սա, պետք է ենթադրել, որ ուսուցչի պատրաստումը ներառում է ոչ միայն ուսուցման մեթոդների տիրապետումը, այլև մեծացնում է նրա հաղորդակցական կոմպետենտության մակարդակը: Սա նշանակում է, որ ուսուցիչը պետք է կարողանա ստեղծել այնպիսի միջավայր, որը հնարավորություն է տալիս սովորողներին զգալ իրենց ապահով և իրենց ընդունակությունների զարգացմանն է նպաստում: Հետևաբար, մանկավարժական հաղորդակցման ոճի բարելավումը պետք է զբաղեցնի կարևոր կամ նույնիսկ առաջատար տեղերից մեկը ոչ միայն ապագա ուսուցիչների նախապատրաստման, այլև ուսուցիչների որակավորման դասընթացների համակարգում:

Կան բազմաթիվ աշխատանքներ՝ նվիրված ուսուցչի մասնագիտական գործունեության ոճի ազդեցությունը սովորողների անձնային զարգացման տարբեր ասպեկտների վրա: Սակայն ուսումնասիրությունները, նվիրված ուսուցչի մանկավարժական հաղորդակցման ոճի ազդեցությունը սովորողների ուսումնական գործունեության արդյունավետության վրա, այնքան էլ շատ չեն: Բայց այս խնդրի ուսումնասիրություններն անհրաժեշտ են:

Հետազոտության օբյեկտը՝ ուսուցչի մանկավարժական հաղորդակցման ոճերը



Հետազոտության առարկան՝ ուսուցչի մանկավարժական հաղորդակցման ոճի ազդեցության առանձնահատկությունները սովորողների ուսումնական գործունեության արդյունավետության վրա:

Հոտազոտության մեթոդները՝ դիտարկում և թեստավորում

Արդիականությունը ուսումնասիրվող պրոբլեմի կայանում է նրանում, որ այժմ դպրոցում ավելի ու ավելի շատ առկա են տարաձայնություններ աշակերտների և ուսուցիչների միջև: Ավելի ու ավելի կա բախում աշակերտների և ուսուցիչների հայցքների և հետաքրքրությունների: Արդյունքում երեխաները պակաս հետաքրքրությամբ են գնում դպրոց, նվազում է ուսուցման արդյունավետության մակարդակը, նվազում է առանձին առարկաների կատարումը: Իսկ ինչպես է ազդում մանկավարժական հաղորդակցման ոճը այս խնդիրների վրա, ուսուցիչները չեն նկատում կամ էլ չեն ուզում նկատել:

Աշխատանքի նպատակը- որոշել ուսուցչի մանկավարժական հաղորդակցման դեմոկրատական, լիբերալ, ավտորիտար ոճերի ազդեցությունների առանձնահատկությունները սովորողների ուսումնական գործունեության արդյունավետության վրա:

Խնդիրները՝

1. Պարզել, թե մանկավարժական հաղորդակցման որ ոճին են հետևում ուսուցիչները և որ ոճն է համարվում լավագույնը:
2. Որոշել, թե մանկավարժական հաղորդակցման որ ոճն է առավել տարածված ուսուցիչների շարքում:
3. Սահմանել գերիշխող ստրատեգիաները և վարքի ոճերը ուսուցման արդյունավետության բարելավման վրա:



Գրական ակնարկ

Երեխայի անձի զարգացմանը ազդող գործոններից մեկը մանկավարժին բնորոշ հաղորդակցության ոճն է: Մանկավարժական ձեռնարկի ոճը կարող է սահմանվել որպես կրթական ազդեցության մեթոդներ, որոնք դրսևորվում են աշակերտների համապատասխան պահվածքի պահանջների եւ ակնկալիքների համար: Այն մարմնավորված է երեխաների կազմակերպման եւ հաղորդակցության բնութագրական ձեւերով եւ ունի համապատասխան եղանակներ ուսուցչի փոխհարաբերությունները երեխաների ինքնության իրականացմանը՝ կապված մասնագիտական-մանկավարժական գործունեության հասուն մակարդակի հետ: Մանկավարժական հոգեբանության մեջ ընդունված է առանձնացնել ուսումնական գործունեությանը նպաստող և օժանդակող հետևյալ կարևոր հասկացությունները՝ *ուսուցչի անձ, գործունեությունը և մանկավարժական հաղորդակցումը*: Ուսուցչի անձի առանձնահատկությունների քննարկումն ու վերլուծությունը չի կարող լիարժեք լինել առանց *մանկավարժական շփման* վերլուծության: Շփումը ուսուցչի աշխատանքի հիմքն է:

Մանկավարժական հոգեբանության մեջ գոյություն ունեն տարբեր մեկնաբանություններ մանկավարժական հաղորդակցման մասին: Ահա դրանից մի քանիսը՝ օրինակ, Լեոնտևը մանկավարժական հաղորդակցումը սահմանում է հետևյալ կերպ՝ «մասնագիտական հաղորդակցումը հաղորդակցում է ուսուցչի և աշակերտների միջև դասի ժամանակ և նրանից դուրս (ուսուցման և դաստիարակության գործընթացում) և ունենալով որոշակի մանկավարժական գործառույթներ և ուղղվածություն, ստեղծում է բարենպաստ հոգեբանական մթնոլորտ ուսումնական գործունեության, ուսուցչի և սովորողների միջև հարաբերությունների շրջանակներում»: [1] Леонтьев А. Н., «Педагогическое общение», М., 1979:



Ի. Ա. Զիմնայան ուշադրություն է դարձնում այն հանգամանքին, որ մանկավարժական հաղորդակցումը «որպես ուսումնական համագործակցության ձև՝ ունի պայմաններ ուսուցման բարելավման և աշակերտների անձի զարգացման համար»: [2] Зимняя И. А., «Педагогическая психология», Ростов-на-Дону, 1997:

ԳԼՈՒԽ 1

1.1 Մանկավարժական հաղորդակցումը, նրա առանձնահատկությունները և ոճերը

1.1.1 Մանկավարժական հաղորդակցման առանձնահատկությունները

Երեխայի անձի ձևավորման և դաստիարակության գործընթացում նշանակալից և առաջնային դեր է կատարում ընտանիքը, սակայն դպրոց ընդունվելուն պես այս պատասխանատվությունը հավասարապես սկսում են կիսել մանկավարժները, որոնք անց են կացնում երեխայի հետ նրա օրվա մեծ մասը: Համաձայն Ա.Ադլերի, իդեալական դպրոցը պետք է միջնորդի դեր կատարի երեխայի ընտանիքի և կյանքի միջև, պետք է լինի այնպիսի վայր, որտեղ երեխան ձեռք է բերում ոչ միայն «գրքային» գիտելիքներ, այլև սովորում է «կյանքի արվեստին»: Դպրոցը պատասխանատու է երեխայի ներդաշնակ զարգացման համար և հասարակական բարդ հարաբերությունների մեջ նրա հարմարման համար: Դպրոցական դաստիարակությունը մեծապես նպաստում է մարդու ապագա կյանքի մոդելի ձևավորմանը: Երեխայի հոգեկան և աճնային զարգացման լիարժեքությունը, դրդապատճառների և պահանջմունքների, հետաքրքրությունների և հակումների, ստեղծագործական մտածողության, սոցիալական ակտիվության, բարոյական ինքնագիտակցության զարգացումը մեծապես կախված է ուսուցչի անձից և նրա արհեստավարժությունից: Ներկայիս կրթական կյանքի պահանջները, երբ առաջ են մղվում անձ-անձ փոխհարաբերությունների կարևորությունը և ի հայտ է գալիս կրթության հումանիզացիայի գործընթացը, առավել կարևորում են ուսուցչի անձը: Շփում ասելով՝ կարելի է հասկանալ սուբյեկտների համագործակցություն, որի մեջ կարելի է առանձնացնել երեք բաղադրամաս՝



1. կոմունիկատիվ /ինֆորմացիայի փոխանակում/;

2. ինտերակտիվ /գործողությունների փոխանակում, փոխհարաբերվելու ստրատեգիայի ընտրություն/;

3. պերցեպտիվ /ուրիշի ընկալում և հասկացում/:

Մանկավարժական հաղորդակցումը ուսուցման և դաստիարակության մեջ ծառայում է որպես աշակերտի անձի վրա ազդեցության գործիք: Մանկավարժական հաղորդակցումը ամբողջական համակարգ է (մեթոդների և հմտությունների), սոցիալ—հոգեբանական փոխազդեցություն է ուսուցչի և աշակերտների միջև, որը պարունակում է տեղեկատվության փոխանակում, դաստիարակչական ազդեցությունների և փոխհարաբերությունների կազմակերպումը հաղորդակցական միջոցների օգնությամբ: Մինչ օրս արդյունավետորեն կազմակերպված մանկավարժական հաղորդակցման գործընթացի նպատակն է ապահովել մանկավարժական գործունեությունում իրական հոգեբանական շփում, որը պետք է լինի ուսուցչի և երեխաների միջև: Հաղորդակցումը կարևոր բաղադրիչ է մանկավարժական գործունեության մեջ, նրանից դուրս անհնար է հասնել հաղորդակցման և դաստիարակության նպատակներին:

Մանկավարժական հաղորդակցումը ստեղծում է պայմաններ մանկավարժական գործընթացում սուբյեկտների պոտենցիալ ներքին ուժի իրականացման համար:

Ըստ Մարկովայի մանկավարժական հաղորդակցման համար բնորոշ են ուսուցչի մասնագիտական կոմպետենտության հետևյալ բաղադրիչները՝

- ❖ մասնագիտական գիտելիքներ
- ❖ մանկավարժական հմտություններ
- ❖ մասնագիտական դիրքորոշումներ
- ❖ հոգեբանական որակներ

Մանկավարժական հաղորդակցումը ճիշտ կազմակերպելու դերը հատկապես մեծ է այն պատճառով, որ այդ մթնոլորտը դառնում է սովորողի անձի զարգացման համար



նախապայման, որը միայն ուսուցիչն է ստեղծում: Այլ կերպ ասած, գիտելիքների փոխանցման տեխնոլոգիաները անցնում են երկրորդական պլան համեմատ այն մթնոլորտի, որը ստեղծում է ուսուցիչը աշակերտների անձի զարգացման համար: Հաճախ դպրոցում ուսուցիչը հաղորդակցվում, համատեղ գործունեություն է իրականացնում, փոխանցելով սեփական գիտելիքները աշակերտներին: Այսպիսի հաղորդակցումը, երբ ուսուցիչը տեսնում է աշակերտի անհատականությունը և ձգտում է հաղորդակցվել նրա հետ, որպեսզի հարստացնի նրա ներաշխարհը, հազվադեպ է: Այնպես որ, կարելի է դրանից ենթադրել, որ մանկավարժական հաղորդակցումը ունի իրավունք առանձին գոյություն ունենալ, որպես արժեքների փոխանակում ուսուցչի և աշակերտների միջև: [3] Маркова А. К., «Психология труда учителя», М., 1993 :

Վ. Ա. Կան-Կալիկը և Ա. Գ. Կովալյովը մասնագիտական հաղորդակցում ասելով հասկանում են հնարների և մեթոդների համակարգ, որոնք ապահովում են մանկավարժական գործունեության նպատակների և խնդիրների իրականացումը, կազմակերպում և ուղղորդում են սոցիալ-հոգեբանական փոխազդեցությունը ուսուցչի և աշակերտների միջև:

Արդյունավետ կոմունիկատիվ գործունեության համար մանկավարժը պետք է իմանա, որ հաղորդակցումը թափանցում է մանկավարժական ազդեցության ամբողջ համակարգ, նրա յուրաքանչյուր մասնիկի մեջ: Դասի ժամանակ մանկավարժը պետք է տիրապետի ամբողջ մանկավարժական գործընթացի կոմունիկատիվ կառուցվածքին, լինի առավել զգայուն փոքր փոփոխությունների նկատմամբ, անընդհատ առնչություն ունենա ընտրված մեթոդների մանկավարժական փոխազդեցության այդ փուլի հաղորդակցման առանձնահատկությունների հետ: [4]

1.1.2 Մանկավարժական հաղորդակցման ոճերը և տիպաբանությունը

Աշակերտի անձի ձևավորման վրա մեծ ազդեցություն ունի ուսուցչի մանկավարժական կառավարման ոճը: Մանկավարժական հաղորդակցման ոճ ասելով հասկանում ենք մանկավարժի և սովորողների անհատական-տիպոլոգիական հատկությունների



փոխգործակցություն: Դրա մեջ մտնում են ուսուցչի կոմունիկատիվ արտահայտության հնարավորությունները՝ ուսուցչի և սովորողի փոխհարաբերությամբ առաջացած բնույթը, ուսուցչի ստեղծագործական ինդիվիդուալիզմը, աշակերտների հասկությունները: Մանկավարժական հաղորդակցման առանձնահատկությունը պայմանավորված է նրա սուբյեկտների սոցիալ-դերային և ֆունկցիոնալ դիրքերի տարբերություններով: Հաղորդակցման և ղեկավարման ոճերը մեծ չափով որոշում են ուսուցման պրոցեսի արդյունավետությունը, անձի զարգացման և ուսումնական խմբում միջանձնային հարաբերությունների ձևավորման առանձնահատկությունները:

Մանկավարժական հաղորդակցական ոճում արտահայտվում են .

- ուսուցչի հաղորդակցական հնարավորությունների առանձնահատկությունները
- ուսուցչի և նրա սաների միջև ստեղծված փոխհարաբերությունները
- ուսուցչի ստեղծագործ անհատականությունը
- աշակերտական կոլեկտիվի առանձնահատկությունները:[4]

Տարրական դասարաններում, որտեղ ուսուցիչը շատ ժամանակ է հաղորդակցվում սովորողների հետ, ստեղծում է բարենպաստ կամ անբարենպաստ միջավայր ոչ միայն ուսուցման համար, այլ նաև սովորողների զարգացման համար: Բարենպաստ պայմաններում աշակերտները չեն վախենում ուսուցչին տալ հարցեր, չեն վախենում սխալվել, չեն կաշկանդվում արտահայտել իրենց զգացմունքները, կարող են օգնություն խնդրել ուսուցչից և դասընկերներից: Հասկանալի է, որ աշակերտների համար հոգեբանական հարամարավետություն կարող է ապահովել ուսուցիչը, որն ինքն իրեն է հարմարավետ զգում դասարանում, այսինքն գիտի, թե ինչպես կարելի է արտահայտել իր հույզերը սոցիալապես ընդունելի ձևով, կարող է հասկանալ աշակերտների զգացմունքները և շփվել տարբեր աշակերտների հետ, լուծել կոնֆլիկտները աշակերտների միջև և միևնույն ժամանակ պաշտպանել իր իրավունքները: [5]

Դասի ժամանակ ուսուցիչը պետք է տիրապետի մանկավարժական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ մշակույթի, լինի հնարավորինս նրբանկատ չնչին



փոփոխությունների նկատմամբ, անըդիատ հարմարեցնի մանկավարժական ներգործության մեթոդները՝ տվյալ իրավիճակին համապատասխան:

ԳԼՈՒԽ 2

2.1 Մանկավարժական հաղորդակցման ոճերի ազդեցությունը սովորողների ուսումնական գործունեության արդյունավետության վրա

Հատնի է, որ ուսումնական գործունեության արդյունավետությունը մեծապես որոշվում է ուսուցչի՝ աշակերտների հետ մանկավարժական հաղորդակցում կազմակերպելու կարողությունից: Հետևաբար մանկավարժական հաղորդակցման մեթոդաբանական ասպեկտները մանրակրկիտ ուսումնասիրության առարկան են, որն իրականացրել են բազմաթիվ հոգեբաններ և մանկավարժներ (Շ. Ա. Ամոնաշվիլի, Ս. Ա. Ջիմնյայա, Վ. Ա. Կան-Կալիկ, Ա. Ա. Լեոնտև և ուրիշներ):

Ուսուցման արդյունավետությունը մեծ մասամբ կախված է նրանից, թե որքան է համաձայնեցված ուսուցչի և աշակերտների գործողությունները: Եթե ուսուցչի և աշակերտների միջև կապը խախտված է, ապա խախտված է փոխազդեցությունը հաղորդակցվողների միջև, որը հանգեցնում է աշակերտների գործունեության խախտմանը:

Բոլոր ոճերը քննարկելիս պետք է հաշվի առնել մի հանգամանք, որ մաքուր ձևով կառավարման ոճերը հազվադեպ են հանդիպում, այդ պատճառով առավել նպատակահարմար է խոսել որոշակի ոճի գերակայության մասին: Դրանք են՝

1. Դեմոկրատական ոճ

Կառավարման *դեմոկրատական* ոճը ի հայտ է գալիս, երբ ուսուցիչը օգտագործում է պնդումներ, դրդող պահանջներ և բարյացակամ ներշնչանք: Համոզվելով երեխաներին, նա բացատրում է կանոններին ենթարկվելու օգտակարությունը, ձևավորում է նրանց մոտ համոզմունք տվյալ պնդման արժեքի վերաբերյալ: Պահանջների սովորական ձևը դեմոկրատական ոճի դեպքում կրում են դրդող



բնույթ ի շնորհիվ ձայնի փափուկ ու ջերմ ինտոնացիաների, հանգիստ միմիկայի, հստակության, աշակերտին անունով դիմելաձևի օգտագործման: Բարյացակամ ներշնչանքը կրում է վստահելի խրատանքի, խնդրանքի, զգուշացման, հիշեցման, խրախուսանքի, անհանգստության ձև: Այսպիսի ոճի դեպքում երեխաների մոտ ձևավորվում է ինքնակառավարման ձգտում, պատասխանատվության զգացում, ինքնավստահություն, բավարարվածության զգացում, առաջ գնալու ցանկություն: Երեխան իրեն մոտ է զգում ուսուցչի հետ և ընդունում նրա դերը:

Աշակերտը դիտվում է որպես հավասար սուբյեկտ հաղորդակցման մեջ: Ուսուցիչը որոշումներ ընդունելուց առաջ հաշվի է առնում աշակերտների կարծիքները, խրախուսում է դատողությունների ինքնուրույնությունը, հաշվի է առնում ոչ միայն առաջադիմությունը, այլ նաև աշակերտների անձնական հատկանիշները: Ազդեցության մեթոդները դրսևորվում են գործունեության կոչով, խորհրդով, խնդրանքով: Դեմոկրատական ոճով դեկլարամամբ աշակերտները փորձարկում են վիճակը ավելի հանգիստ բավարարվածությամբ, բարձր ինքնագնահատականով: Այս ոճով աշխատող ուսուցիչները ավելի շատ ուշադրություն են դարձնում իրենց հոգեբանական հմտությունների վրա: Այսպիսի ուսուցիչները բնութագրվում են բարձր մասնագիտական կայունությամբ, իրենց մասնագիտությունից բավարարվածությամբ:

2. Ավտորիտար ոճ

Ավտորիտար ոճի կիրառելիության ընթացքում ուսուցիչը առավելապես օգտագործում է պահանջներ և ագրեսիվ ներշնչանք: Պահանջներն ուղղված են աշակերտների անցանկալի վարքաձևերի ճնշմանը: Ագրեսիվ ներշնչանքը ընդունում է խրատանքների, զգուշացումների, սպառնալիքների, բարկության, վրդովմունքի ձևեր: Այս ամենը ուղեկցվում է բարկացած, ծաղրանքով լի, նյարդայնացած միմիկայով և ինտոնացիաներով: Այս ոճը ձևավորում է աշակերտի լիարժեք ենթարկում ուսուցչին, արգելակում վարքի ինքնակարգավորման ընդունակության զարգացումը: Աշակերտները կարող են ունենալ տագնապալիության բարձր մակարդակ, վախ, ագրեսիվություն,



վիրավորվածություն և այլ: Այս դեպքում աշակերտը դիտվում է մանկավարժական ազդեցության օբյեկտ, և ոչ թե հավասար գործընկեր: Ուսուցիչը մենակ է ընդունում որոշումներ, սահմանում է խիստ հսկողություն նրանց պահանջների համապատասխանությանը, օգտագործում է իր իրավունքները առանց հաշվի առնելու իրավիճակը և աշակերտների կարծիքը, չի հիմնավորում իր գործողությունները աշակերտների առաջ: Արդյունքում աշակերտները կորցնում են իրենց ինքնուրույնությունը կամ կատարում են նրան ուսուցչի ղեկավարությամբ, ունենում են ցածր ինքնագնահատական, ազդեցիվություն: Ավտորիտար ոճի դեպքում աշակերտների ուժերը ուղղված են հոգեբանական ինքնապաշտպանության, և ոչ թե գիտելիքների յուրացմանը և սեփական զարգացմանը: Այսպիսի ուսուցիչների ազդեցության գլխավոր մեթոդներն են հրամայումը, ցուցումը: Ուսուցչի համար բնութագրական է ցածր բավարարվածությունը մասնագիտությունից և մասնագիտական անկայունությունը:

Ավտորիտար ոճը դեռ խստություն չէ, պետք չէ դրանք նույնացնել, շփոթել: Զսպվածությունն ու խստությունը կարող են լինել ուսուցչի անձնական որակներ: Այդ դեպքում աշակերտը հեշտությամբ է կատարում նրա պահանջները, եթե զգում է համագործակցության հետաքրքրվածություն:

3. Լիբերալ ոճ

Կառավարման *լիբերալ* ոճի կիրառումն այնքան էլ նպաստակահարմար չէ մանկավարժական գործունեության ընթացքում, քանի որ հաճախ իրավիճակային է, կախված տրամադրությունից, հոգեվիճակից, իրադրությունից: Աշակերտները չեն կարողանում հարմարվել տվյալ ուսուցիչներին, քանի որ հաճախ նկատում են կտրուկ տարբերություններ նրանց մոտեցումներում: Տվյալ ոճը չի նպաստում աշակերտների մոտ ոչ ուսուցչին ենթարկվելու միտում, ոչ էլ ինքնակառավարման տենդենցներ: Ուսուցչի դիրքորոշումը նեյտրալ է, հետևաբար հաճախ դասարանում ի հայտ են գալիս առաջնորդներ, որոնք վերցնում են իրենց վրա ուսուցչական դերեր:



Աշակերտների գործունեության կազմակերպումը և վերահսկումը իրականացվում է առանց համակարգի, ցույց է տալիս անվճռականություն, անկայունություն: Դասարանում տիրում է անկայուն մթնոլորտ, թաքնված կոնֆլիկտներ:

Իհարկե, նպատակահարմար է ուսուցչի աշխատանքի ազդեցության դեմոկրատական ոճը, թեև որոշ դեպքերում անհրաժեշտ է լինում կիրառել մենիշխանություն: [3] Маркова А. К., «Психология труда учителя», М., 1993 :

Ուսուցման հաջողության մեջ մեծ դեր ունի նաև նրանց անձերի փոխազդեցությունը, նրանց միջև փոխըմբռնումը, որն ըստ Վ. Ա. Կան-Կալիկի սահմանման, դասարանում համագործակցության հիմքն է, հետևաբար, եթե նույնիսկ լավ վերապատրաստված ուսուցիչը, նրա մեթոդաբանական ունակությունները, իր գործողությունների նպատակահարմար պլանավորումը, ուսուցման արդյունքը կարող է նվազագույնի հասնել, եթե չի զարգանում իր և իր աշակերտների միջև հարաբերությունները:[8]

Չափազանց արդյունավետ է համարվում մանկավարժական հաղորդակցման այն ոճը, որի հիմքում ընկերական հարաբերություն է ընկած: Հաղորդակցման նման ոճը դիտվում է որպես նախապայման հաջող համատեղ ուսումնա-դաստիարակչական գործունեության: Ի վերջո, ընկերական տրամադրվածությունը ընդհանրապես հաղորդակցման կարևոր կարգավորիչն է, իսկ գործնական մանկավարժական հաղորդակցման մեջ՝ հատկապես: Դա խթանիչ է ուսուցչի՝ աշակերտների հետ հարաբերությունները արդյունավետ զարգացնելու համար:

Համերաշխությունը և բավարարվածությունը համատեղ գործում հաղորդակցման ոճ է, որոնք սերտ կապված են միմյանց հետ:

Բավարարվածությունը ընդհանուր գործում համերաշխության աղբյուրն է, և միևնույն ժամանակ համերաշխությունը բազմապատկում է աշխատանքի նկատմամբ հետաքրքրությունը, առաջացնում է համատեղ եռանդուն, շահագրգիռ որոնումներ: Խոսելով ուսուցչի՝ աշակերտների հետ փոխհարաբերությունների համակարգի մասին՝ Ա. Ս. Մակարենկոն պնդում է, որ մանկավարժը, մի կողմից, պետք է լինի ավագ ընկերը և



դաստիարակը, իսկ մյուս կողմից, մասնակից համատեղ գործունեության: Օրինակ, օրվա դասին պատրաստվելիս, ես մտածում եմ թե որ մեթոդը արդյունավետ կլինի կիրառելի: Իսկ երբ որևէ մեթոդ եմ կիրառում դասապրոցեսին, այդ մեթոդով աշխատում եմ նաև ես: Երբ բոլոր աշակերտները ներկայացնում են իրենց աշխատանքները, վերջում ես եմ ընթերցում իմ գրածը: Աշակերտների արձագանքը լինում է հետևյալը. «Ձեր գրածն ամենալավն է»: Այսպես աշխատելիս ես ինձ համարում եմ ավագ ընկեր, մյուս կողմից էլ մասնակից եմ լինում համատեղ ուսումնական գործունեության: Եվ իմ այս հաղորդակցման ոճը միանշանակ դրական է ազդում ուսուցման գործընթացի արդյունավետության վրա:

Հարկ է նշել, որ մանկավարժական հաղորդակցման պրոցեսում ամեն մասնիկ պետք է լինի չափավոր:

Համաձայն Ա.Լեոնտևի, արդյունավետ մանկավարժական շփումը նպաստում է սովորողների մոտիվացիայի բարձրացմանը, ուսումնական գործունեությանը ստեղծագործական բնույթի հաղորդմանը, երեխայի անձի ձևավորմանը, ուսուցման դրական մթնոլորտի ստեղծմանը, ներխուժային գործընթացների արդյունավետ կառավարմանը, ուսումնական դժվարությունների հաղթահարմանը: Արդյունավետ շփումը օգնում է ուսուցչին և երեխային լիարժեք բացահայտել սեփական ներաշխարհը և դրսևորել այն: Ուսուցիչը արդյունավետ է շփվում երեխաների հետ, եթե՝

- բարյացակամ է և քաջալերող
- թույլ է տալիս աշակերտին ինքնուրույնություն դրսևորել, հայտնել սեփական կարծիքը, ազատ արտահայտվել
- ակտիվ է, հետաքրքրված, լիովին ընդգրկված ուսումնական գործընթացի մեջ
- անկեղծ է, չի վախենում ցույց տալ իր թերությունները
- դինամիկ է և ճկուն շփման մեջ, արագ ըմբռնում է առկա դժվարությունները, մարում կոնֆլիկտները
- հարգալից է, հասկացող, ընդունող աշակերտի անձը, ցուցաբերում է անհատական մոտեցում



- կարող է դժվարությունը դիտել երեխայի տեսակետից ելնելով, պատրաստ է ռեֆլեքսիայի, աշակերտի մոտ առաջացնում է վստահություն, որ իրեն հասկացել են
- ակտիվ է, դասարանը պահում է դրական լարվածության մեջ:

Արդյունավետ մանկավարժական շփման համար կարևոր նշանակություն ունի նաև սոցիալական հեռավորությունը, որը բնութագրվում է ուսուցչի և աշակերտի սոցիալական դիրքերի տարբերությամբ, նրանց իրավունքներով և պարտականություններով միմյանց հանդեպ: Մեծ սոցիալական հեռավորության դեպքում կարող է օտարացում առաջանալ, շատ փոքր հեռավորության դեպքում շփումը կարող է կրել ընկերական բնույթ:

Քննարկենք մի քանի հետազոտողների աշխատանքները՝

Օրինակ՝ Ն. Ֆ. Մասլովան առանձնացնում է ուսուցչի ղեկավարման 2 հիմնական ոճեր՝ դեմոկրատական և ավտորիտար: Նրանց տարբերությունները ներկայացված են աղյուսակում:

Դեմոկրատական	Ավտորիտար
1. Աշխատում է ամբողջ դասարանով:	1. Աշխատում է աշակերտների հետ մեկ-մեկ:
2. Փորձում է հաշվի առնել աշակերտների անհատական առանձնահատկությունները և նրա անձնական փորձը, ակտիվությունը, պահանջմունքները:	2. Աշակերտների մասին պահպանում է «միջին» տեսակետը, հաշվի չի առնում նրանց անհատական առանձնահատկությունները:



3. Բնութագրվում է անհատական մոտեցմամբ:	3. Բնութագրվում է ֆունկցիոնալ-գործնական և իրավիճակային մոտեցմամբ:
4. Չունի և ցույց չի տալիս բացասական դիրքորոշումներ	4. Ցայտուն արտահայտված դիրքորոշումներ
5. Գնահատումը և վարքը ստերեոտիպացված չէ	5. Ստերեոտիպացված է գնահատումը և վարքը
6. Շփումներում ընտրողական չէ, սուբյեկտիվ չէ գնահատումների դեպքում:	6. Ընտրողական է շփումներում և սուբյեկտիվ է գնահատումների դեպքում:

Ա. Ա. Բողայեվը առանձնացրել է հետևյալ ոճերը՝

- ❖ ավտորիտար
- ❖ լիբերալ
- ❖ դեմոկրատական [1]

Այս հեղինակները հատկապես կարևորում են այնպիսի գործոնների նշանակությունը, ինչպիսիք են դրական վերաբերմունքի ձևավորումը երեխաների նկատմամբ, նրանց հասկանալու կարողությունը և նրանց վրա ազդելը, ուսուցչի կողմից խնդիրների գիտակցված ձևակերպումը, հաղորդակցման տակտիկա գտնելը:



ԳԼՈՒԽ 3

3. Մանկավարժական հաղորդակցման ոճի ազդեցության ուսումնասիրման մեթոդական մոտեցումները աշակերտների ուսումնական գործունեության արդյունավետության վրա

Հաղորդակցման մթնոլորտը այսօր դառնում է առաջատար առանձնահատկություն ժամանակակից դասում: Այդ մթնոլորտի ստեղծումը հերթական նորաձևություն չէ, այլ պահանջ է, որը բխում է ուսուցման ծրագրի նպատակներից և օրինաչափություններից, քանի որ նպատակը դրսևորվում է ուսուցման հմտությունների և կարողությունների տարբեր ձևերով, իսկ հաջողությամբ կարելի է դասավանդել միայն համապատասխան պայմաններում կամ համապատասխան մթնոլորտի ստեղծման դեպքում: Հարաբերությունների և և հաղորդակցման մթնոլորտի դեմոկրատացումը կարևոր են նաև այլ պատճառներով: Բանը նրանում է, որ ուսուցումը չպետք է և չի կարող հաջողությամբ իրականանալ ճնշման տակ: Ցավոք, շատ ուսուցիչներին և հատկապես երիտասարդներին թվում է, որ կեղծ խստությունը կօգնի վերականգնել կարգապահությունը դասարանում:

Խոսքային համագործակցության կարևորությունը հաստատում է այն փաստը, որ միայն դեմոկրատական փոխհարաբերությունների պայմաններում կարող են արդյունավետ կերպով իրականացնել աշակերտների հետ ուսումնական ազդեցություն: Լավ հարաբերությունները միակ ալիքն է, որի միջոցով ուսուցչից աշակերտին է տեղափոխվում խելացի մտքերն ու բարի զգացմունքները:

Ուսուցիչը, որոշելով իր մանկավարժական գործունեության ոճը, պետք է հաշվի առնի ոչ միայն իր բնավորության առանձնահատկությունները, իր արժեքները և համոզմունքները, այլ նաև պետք է հիշի, թե ինչպես է դա անդրադառնում աշակերտների ուսուցման վրա, նրանց սովորելու մոտիվացիայի և գիտելիքների վրա, որոնք նրանք ստանում են: [8]



1.1 Ուսուցչի մանկավարժական հաղորդակցման ոճի որոշումը և հարաբերակցությունը աշակերտների ուսուցման արդյունքների հետ:

Ուսումնասիրվող պրոբլեմի արդիականությունը կայանում է նրանում, որ այժմ դպրոցում ավելի ու ավելի շատ առկա են տարաձայնություններ աշակերտների և ուսուցիչների միջև:

Ավելի ու ավելի են շատանում բախումները աշակերտների և ուսուցիչների հայացքների և հետաքրքրությունների միջև: Արդյունքում երեխաները պակաս հետաքրքրությամբ են գնում դպրոց, նվազում է ուսուցման արդյունավետության մակարդակը, նվազում է առանձին առարկաների պահանջների կատարումը: Իսկ ինչպես է ազդում մանկավարժական հաղորդակցման ոճը այս խնդիրների վրա, ուսուցիչները չեն նկատում կամ էլ չեն ուզում նկատել:

Ստանձնելով որևէ դիրք և ընտրելով վարքի որևէ մոդել, նրանք փորձում են մնալ այդպիսին, չնայելով հետևանքներին: Բայց եթե մենք ունենանք պատկերացում այն մասին, թե մանկավարժական հաղորդակցման որ ոճն է բնորոշ այս կան այն վարքագծի որոշակի իրավիճակին, հնարավոր կլինի խուսափել կոնֆլիկտներից, առնվազն նրանց մի մասից: Իսկ մանկավարժական գործունեության ոճից նաև կախված է ուսուցիչների և աշակերտների միջև հաղորդակցումը, որն ուսուցման գործընթացի անբաժանելի մասն է, հետևաբար, կարևոր է իմանալ, թե մանկավարժական հաղորդակցման որ ոճն է այժմ տարածված ավելի մեծ չափով, ինչպես նաև յուրաքանչյուր ոճի ազդեցությունը ուսուցման արդյունքների վրա:

Նորությունը մեր աշխատանքի կայանում է նրանում, որ մենք փորձում ենք դիտարկել ոչ միայն այն, թե հաղորդակցման որ ոճն է ուսուցիչն ընտրում և թելադրում աշակերտներին և այժմ համարվում է ամենատարածվածը, բայց և հետևել ենք, թե տվյալ ոճը ինչպես է ազդում ուսուցման արդյունավետության վրա:

Հետազոտության օբյեկտը- ուսուցչի մանկավարժական հաղորդակցման ոճերը



Հետազոտության առարկան- ուսուցչի մանկավարժական հաղորդակցման ոճի ազդեցության առանձնահատկությունները սովորողների ուսումնական գործունեության արդյունավետության վրա:

Աշխատանքի նպատակը- որոշել ուսուցչի մանկավարժական հաղորդակցման դեմոկրատական, լիբերալ, ավտորիտար ոճերի ազդեցությունների առանձնահատկությունները սովորողների ուսումնական գործունեության արդյունավետության վրա:

Խնդիրները՝

1. Պարզել, թե մանկավարժական հաղորդակցման որ ոճին են հետևում ուսուցիչները և որ ոճն է համարվում լավագույնը:
2. Որոշել, թե մանկավարժական հաղորդակցման որ ոճն է առավել տարածված ուսուցիչների շարքում:
3. Սահմանել գերիշխող ստրատեգիաները և վարքի ոճերը ուսուցման արդյունավետության բարելավման վրա:

Ինչպես երևում է աղյուսակից, ուսուցիչների շրջանում չկա միանշանակ համաձայնություն մանկավարժական հաղորդակցման լավագույն ոճի մասին ուսուցման արդյունավետության բարելավման համար:

Հետազոտության հաջորդ փուլը յուրաքանչյուր ուսուցչի մանկավարժական հաղորդակցման ոճի որոշումն է: Հետազոտությունը արվել է օգտագործելով Լոբանովի հարցաթերթիկը, որը բաղկացած է 10 հարցերից, որոնք առաջադրվել են ուսուցիչներին: Այս մեթոդը ընտրվել է նրա համար, քանի որ շատ կարճ ժամանակում կարելի է ուսումնասիրել մեծ քանակությամբ մարդկանց: Արդյունքները մշակվում և վերլուծվում են միավորներով: Միավորների ընդհանուր հաշիվը բնութագրում է ուսուցչի միտումը մանկավարժական հաղորդակցման որոշակի ոճի նկատմամբ:

25-30 միավոր- դեմոկրատական ոճի միտում



20-24 միավոր- ավտորիտար ոճի միտում

10-19 միավոր- լիբերալ ոճի միտում

Արդյունքները ներկայացված են աղյուսակ 2-ում

Աղյուսակ 2. Մանկավարժական հաղորդակցման ոճերը

<i>Մանկավարժական հաղորդակցման ոճերը</i>	Ուսուցիչների քանակը՝ ըստ ոճերի նախապատվության
Դեմոկրատական	40%
Լիբերալ	24%
Ավտորիտար	36%

Վերլուծելով հետևյալ տվյալները, կարելի է եզրակացնել այն մասին, որ ուսուցիչների շրջանում գերակշռում է հաղորդակցման դեմոկրատական ոճը: Թեև հաղորդակցման ավտորիտար ոճը ուսուցիչների շրջանում ևս տարածված է:

Արդյունքում պարզվեց, որ այն դասարաններում, որտեղ ուսուցիչները աշխատում են մանկավարժական հաղորդակցման դեմոկրատական ոճով, ուսման մեջ ունեն բարձր արդյունքներ: Իսկ այն դասարաններում, որտեղ ուսուցիչները աշխատում են ավտորիտար ոճով, ուսուցման մակարդակը ավելի ցածր է: Նման իրադրություն կա նաև այն դասարաններում, որտեղ ուսուցիչները աշխատում են լիբերալ ոճով:

Ամփոփելով, պետք է նշել, որ որ մանկավարժական հաղորդակցման ոճը մեծապես ազդում է ուսուցման արդյունավետության վրա:



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Եզրակացության մեջ նշենք ,որ այս աշխատանքը կարող է լինել գործողությունների ուղեցույց, դասի ստեղծագործական մոտեցման և մանկավարժական հաղորդակցման ոճի ճիշտ ընտրության պայմաններում:

Մրա համար անհրաժեշտ են մի քանի պայմաններ՝ ինտուիցիա, փորձ, ուսուցման մարտավարության տիրապետում, բայց այս որակներից որևէ մեկը չպետք է լինի հիմնական: Պետք է գտնել միջինը: Բայց նաև պատահում է այպես, որ ուսուցիչը առաջնորդվում է մեթոդական կանոններով, աստիճանաբար վեր է անվում «արհեստավորի» (վարպետի): Երկուսն էլ հավասարապես վատ են:

Կարևոր որակ է ինտուիցիան, բայց նրան պետք է զարգացնել այնպես, կարծես այն արդյունք է երկար գործնական աշխատանքի:

Մենք չպետք է մտածենք, որ փոխհարաբերությունների դեմոկրատացումը նշանակում է ուսուցչի գործողությունների լրիվ կամայականություններ: Ազատությունը այստեղ ընկալվում է անհրաժեշտություն:

Պետք է նշել, որ մաքուր հաղորդակցական ոճ պրակտիկայում գրեթե չի հանդիպում: Մակայն դրանց այս կամ այն տեսակի գերակշռումով է պայմանավորում մանկավարժի անհատական հաղորդակցման ոճը, հետևաբար նրա գործունեության և հաղորդակցման որակը: Անհատական ոճի ձևավորումը չի կատարվում անմիջապես, այն ձևավորվում է երկարատև պրակտիկ գործունեության ընթացքում, իհարկե եթե մանկավարժը դրսևորում է ինքնավերլուծություն, ինքնաքննադատություն, անընդհատ աշխատում է իր դրական հատկանիշների զարգացման ու բացասականների վերացման վրա: Ոճի դրական ու բացասական դրսևորումների մասին է խոսում սովորողների վերաբերմունքը՝ մանկավարժի և նրա կողմից դասվանդվող առարկայի նկատմամբ:

Այսպիսով, կարելի է նկատել, թե որքան են կարևորվում ուսուցչի անձը և նրա շփման հմտությունները ուսումնական գործընթացում, քանի որ անհրաժեշտ անձնային որակների,



մասնագիտական հմտությունների առկայության, ինչպես նաև արդյունավետ շփման, կառավարման ոճի շնորհիվ կարելի է խթանել երեխայի անձի զարգացումը, իսկ հակառակ դեպքում սահմանափակել այն:



ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Леонтьев А. Н., «Педагогическое общение», М., 1979
2. Зимняя И. А., «Педагогическая психология», Ростов-на-Дону, 1997
3. Маркова А. К., «Психология труда учителя», М., 1993
4. Кан-Калик В. А., «Учителю о педагогическом общении», М., 1987
5. Психология и педагогика, М., 2000
6. Станкин М. И., «Психология общения: курс лекций», М., 2000
7. Маркова А. К., «Формирование мотивации учения в школьном возрасте», М., 1983
8. Бадмаев Б. Ц. «Психология в работе учителя», М., 2000



ՀԱՎԵԼՎԱԾ

Ուսուցչի մանկավարժական հաղորդակցման ոճի որոշման հարցարան

Հրահանգ՝ ուշադիր կարդացե՛ք հարցերը և ընտրեք Ձեզ առավել համապատասխան տարբերակը:

1. Կարծում եք, որ երեխան պետք է՝
 - 1) Կիսի իր բոլոր զգացմունքներն ու մտքերը
 - 2) Խոսի միայն, ինչ ուզում է
 - 3) Պահի իր մեջ իր զգացմունքները և մտքերը
2. Եթե երեխան առանց թույլտվության վերցրել է ուրիշ երեխայի խաղալիքը կամ որևէ առարկա, դուք՝
 - 1) Վստահելով խոսում եք նրա հետ և թողնում եք, որ նա ընդունի անհրաժեշտ որոշումը
 - 2) Թողնում եք, որ երեխաները իրենք լուծեն այդ խնդիրը
 - 3) Դրա մասին ասում եք բոլոր երեխաներին և առաջարկում եք վերցրած իրը վերադարձնել
3. Շարժունակ, անհանգիստ, երբեմն անկարգապահ երեխան դասի ընթացքում լինում է ուշադիր և կենտրոնացված: Ի՞նչ եք անում դուք՝
 - 1) Գովաբանում եք նրան և ցուցադրում եք նրա աշխատանքը բոլոր երեխաներին
 - 2) Ցուցաբերում եք հետաքրքրություն և պարզաբանում եք այդպիսի վարքագծի պատճառները
 - 3) Ասում եք. «Միշտ պետք է այդպես աշխատել»:
4. Երեխան, ընդգրկվելով խմբի մեջ, չի ողջունել ձեզ: Ինչպե՞ս կվարվեք.



- 1) Առաջարկում եք նրան բարձրաձայն ողջունել
 - 2) Ուշադրություն չեք դարձնում
 - 3) Նրա հետ շփվում եք՝ չխոսելով այդ մասին
5. Երեխաները հանգիստ զբաղվում են: Դուք ունեք ազատ ժամանակ: Ի՞նչ եք նախընտրում անել.
- 1) Հանգիստ, առանց խանգարելու հետևում եք, թե ինչպես են նրանք աշխատում
 - 2) Մեկին կօգնեք, կհուշեք, մյուսին ուղղություն կտաք
 - 3) Ձեր գործերով կզբաղվեք
6. Ո՞ր տեսակետն է ճիշտ ըստ ձեզ՝
- 1) Երեխաների զգացմունքները ավելի մակերեսային են, շուտ անցնող և պետք չէ նրանց հատուկ ուշադրություն դարձնել
 - 2) Երեխաների զգացմունքները, նրանց ապրումները կարևոր գործոններ են, որոնց օգնությամբ կարելի է նրան արդյունավետ դաստիարակել և սովորեցնել
 - 3) Երեխաների զգացմունքները զարմանալի են, ապրումները՝ կարևոր, և նրանց պետք է վերաբերվել զգուշորեն:
7. Ձեր նախնական դիրքորոշումը երեխաների հետ աշխատանքի դեպքում.
- 1) Երեխան հմուտ չէ, և միայն մեծահասակը պետք է դաստիարակի նրան և սովորեցնի:
 - 2) Երեխան ունի ինքնազարգացման շատ հնարավորություններ, իսկ մեծահասակի հետ համագործակցությունը պետք է նպաստի երեխաների համար առավելագույն զարգացմանը



- 3) Երեխան զարգանում է ժառանգականության և ընտանիքի անուղղակի ազդեցության տակ, և ամենակարևորը պետք է հոգալ այն մասին, որ նա ճիշտ սնվի, լինի առողջ և չխախտի կարգապահությունը:

8. Ձեր վերաբերմունքը երեխայի ակտիվությանը՝

- 1) Դրական- առանց դրա հնարավոր չէ լիարժեք զարգացում
- 2) Բացասական- հաճախ դա խանգարում է ուսուցմանը
- 3) Դրական-երբ ակտիվությունը համաձայնեցված է ուսուցչի հետ

9. Երեխան չի ցանկանում անել գործը այն պատրվակով, որ արդեն դա արել է: Ձեր քայլերը.

- 1) Ուշադրություն չեք դարձնում դրան
- 2) Առաջարկում եք կատարել աշխատանքը
- 3) Առաջարկում եք ուրիշ աշխատանք

10. Ո՞ր դատողությունն է, ըստ ձեզ, ավելի ճիշտ.

- 1) Երեխան պետք է երախտապարտ լինի մեծահասակներին հոգատարության համար
- 2) Եթե երեխան չի գիտակցում հոգածությունը, դա նրա գործն է, բայց նա մի օր դրա համար զղջալու է
- 3) Ուսուցիչը պետք է երախտապարտ լինի երեխաներին հոգածության և սիրո համար: